
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՏԿԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԼԵՌՆԱՆՈՒՆՆԵՐ

ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ Փ. Գ.

Աստվածաշնչի հատուկ անունների քննության մեջ ուրույն տեղ ու դեր ունեն լեռնանունները: Դրանք ոչ պակաս չափով իրենց մեջ կրում են թե՛ հրեաների, թե՛ բազմաթիվ այլ ցեղերի ու ժողովուրդների պատմության ինչ-որ տարրեր, և այդ անունների քննությունը ևս ի ցույց է դնում բազմաթիվ հետաքրքիր իրողություններ:

Մեծ է լեռան խորհուրդը Սուրբ Գրքում: Հնում լեռան մեջ մարդիկ աստվածային ուժ և զորություն են տեսել. Եսայու մարգարեության մեջ կարդում ենք. «Աստծու տունը լեռների գագաթներին, պիտի բարձրանայ բլուրների վրայ, եւ բոլոր հեթանոսները պիտի շարժուեն դէպի նա» (Բ 2), Երեմիայի մարգարեության մեջ՝ «Օրհնեալ է Տէրն իր արդար ու սուրբ լեռան վրայ» (ԻԱ 23): Լեռը ապահովություն և ապաստան է եղել, թշնամուն դիմագրավելու և թշնամուց պատսպարվելու հզոր միջոց. սաղմոսներում դա յուրահատուկ ձևով է արտահայտվում. «Այքերս դէպի լեռները բարձրացրի, որտեղից ինձ օգնութիւն պիտի գայ (ՃԻ 1): Եվ հետո. եթե ուշադիր լինենք, ապա կնկատենք, որ Աստված իր բոլոր մեծ ու փոքր գործերը լեռների վրա էր կատարում. հիշենք մի քանիսը. Նոյի տապանն իջավ Արարատ լեռան վրա, Աստված Աբրահամին պատվիրեց բարձրանալ լեռան վրա և այնտեղ զոհաբերել իր Բսահակ որդուն, Սինա լեռան վրա բարձրացավ Մովսեսը և Աստծուց ստացավ քարե Տասնաբանյան, Քրիստոսը խաչվեց Գողգոթայի վրա, և, վերջապես, Սինա լեռը հռչակված էր իբրև Տիրոջ լեռ:

Հին ժողովուրդներն ու ցեղերը սիրել են իրենց բնակությունը հաստատել անպայմանորեն լեռների փեշերին, և այդպես հիմնադրվել են խոշոր գյուղեր, քաղաքներ, անգամ երկրներ: Ու քաղաքը հիմնադրողի անունով էլ կոչվել են թե՛ քաղաքը, թե՛ լեռը, թե՛ դաշտը, անգամ գետը: Այդպես լեռները անվանվել են. Նեփթաղիմի անունից՝ Նեփթաղիմի լեռներ, Հուդայի անունից՝ Հուդայի լեռներ, Եփրեմի անունից՝ Եփրեմի լեռներ, ինչն էլ դարձյալ փաստում է մի՝ օրինաչափություն դարձած ճշմարտություն, որ միշտ անձնանունից է առաջանում տեղանունը:

Ներկայացնենք աստվածաշնչյան լեռնանունների քննությունը՝ արված հիմնականում հունարեն (Յոթանասնից) բնագրի համեմատությամբ:

ԱԲԱՐԻՄ (*Αβάριν, Аварим*) – Անվան նշանակությունները մի քանիսն են՝ բոլորն էլ բացատրվում են հոգնակի՝ «անցք, անցաւորք, սրտմտութիւնք և կամ ասորերեն՝ ցորեանք»:

Այն

կարծիքը,

որ

Աբարի-

մը լեռնային երկիր է, և նրա լեռներն են Նաբավը, Փեգովը¹, Աստվածաշնչում չի հաստատվում. Աբարիմը լեռ է, դրանում կհամոզվենք ստորև: Անունը տարընթերցում ունի Յոթանասնից բնագրում՝ *Αβαριν* և *Αβαριμ* :

Ըստ Աստվածաշնչի (Երկ. Օրին., ԼԲ 49, Թվ., ԼԳ 47)՝ Երիքովի դիմաց տարածված Մովաբի երկրի լեռ, որ Աստվածաշնչում հաճախ սխալմամբ գործածվում է նաև Նաբավ անվան փոխարեն. «Ե՛լ դու ի լեռոնն Աբարիմ, ի լեռոն Նաբաւ, որ է յերկրին Մովաբու յանդիման Երիքովի» (Երկ. Օրին., ԼԲ 49): Արևելահայերեն Աստվածաշնչը նույնիսկ խմբագրել է՝ «Աբարիմ լեռը՝ Նաբաւ լեռը...»: Նույնը հաստատվում է Յոթանասնիցում՝ *oros to Αβαριν*, *oros Ναβαυ*: Հաջորդ բնագրային օրինակում արդեն Աբարիմն ու Նաբավը տարբեր լեռներ են. «...եւ բանակեցան ի լերինսն Աբարիմ յանդիման Նաբաւայ...» (Թվ., ԼԳ 47-48), ինչն ասես պատճենված լինի հունարեն տեքստից. «*τα Αβαριμ απεναντι Ναβαυ*»:

ԱՐԱՐԱՏ (*Αραρατ*, *Arapat*) – Ըստ Աստվածաշնչի (Ծն., Ը 4, Դ Թագ., ԺԹ 37)՝ Արարադ կամ Արարատ. «Եւ նստաւ տապանն յերթներորդում ամսեանն ի քսանեւեւթն ամսոյն ի լերինս Արարատայ» (Ծն., Ը 4), իսկ հունարեն տեքստում առկա Արարատի փոխարեն (Տովբիթ, Ա 21) հայերեն թարգմանությունների մեջ՝ Հայոց լեռներ. «Եւ փախեան նոքա ի լերինս Հայոց» (24):

Եբրայական ծագում ունեցող լեռնանունների շարքում Աստվածաշնչում առաջին գործածված լեռնանունը Արարատն է, որը՝ իբրև լեռ, մեզ՝ հայերիս համար ունի առանձնահատուկ իմաստ և դերակատարում:

Արարատ անունը ենթարկվել է զանազան ստուգաբանությունների. ըստ Մ. Մեբաստացու՝ «անէծք սասանման, կամ եբրայեցերէն և ասորերէն՝ անէծք կամ լոյս ընթացողի»²: Ումանք Արարատ անունը բխեցնում են Ուրարտու անունից (Հումելաուեր, Շրոդեր), Ղ. Բնձիճյանն ու Ղ. Ալիշանը իրավացիորեն գտնում են, որ Արարատը նախապես եղել է երկրի կամ թագավորության անուն և հետո միայն դարձել լեռան անուն: Մ. Խորենացին այս անունը կապում է Արա Գեղեցիկի անվան հետ և ստուգաբանում է Արայի արատ (Արայի կործանում), որից և՛ Արարատ: Փ. Բուզանդը վկայում է Սարարադ (այսինքն՝ սարն Արարադ) ձևով: Անունը փորձում են բացատրել սեմական լեզուների օգնությամբ, որոնցում նշանակում է բարձրություն, իսկ արմատի կրկնությունը բառին տալիս է սաստկական ի-

¹ *Sté u Нюстрем Эрик*, *Библейский словарь (այսուհետև՝ БС)*, перевод со шведского, под редакцией Свенсона И. С., СПб., 1995, с. 2.

² *Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր Կտակարանաց (այսուհետև՝ ԲՅԱ)*, Վենետիկ, 1769, էջ 33:

մաստ, այսինքն՝ ավելի բարձր: Արարատ անվանը տրվել են նաև լույս, փայլ, զորություն, մեծություն իմաստները, Հուրարտա, Հարա-հարա (Լերինք լեռանց) Արի-վարդա (Արեաց երկիր) անունները և այլն: Օտար մատենագիրները կոչել են Արարատի լեռներ, Արարատյան աշխարհի լեռներ, Հայոց լեռներ: Արարատը տեղադրված է մոտ 130 կմ եզրագիծ ունեցող ընդհանուր հիմքի վրա, կազմված է երկու կոնաձև գագաթներից, որոնցից մեծը կոչվում է Մասիս (5165 մ) փոքրը՝ Սիս (3925 մ):

Աստվածաշնչում (Ծն., Ը), այն ներկայացվում է իբրև համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյ նահապետի հանգրվան, որի համար էլ Արարատը ճանաչված է նաև Նոյյան լեռ անունով (զենդ.՝ Կուհի Նուհ կամ Նոյյան տապանի լեռ): Հայ բանաստեղծության մեջ՝ նաև Ավետյաց լեռ:

Քրիստոնեության դարձից հետո հայ եկեղեցին Արարատի սրբազնությանը նոր գունավորում տվեց, իսկ հեթանոսական ավանդության քաջաց ոգիները փոխեց Նոյի սրբազան տապանի պահապան հրեշտակներով: Ըստ Ագաթանգեղոսի՝ Տրդատ Գ Մեծը Հռիփսիմեի վկայարանը կառուցեց սրբազան Մասիսից բերված քարերով:

XIII դ. ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուկը վկայում է, որ հայերն Արարատի վրա չեն բարձրանում ոչ այնքան լեռան դժվարամատչելիության, որքան նրա սրբազան լինելը չաղծելու համար³:

Արարատը աշխարհի ամենագեղեցիկ, բարձր ու փառահեղ լեռներից մեկն է՝ բիրիական առասպելով սրբացած, որի մասին ամերիկացի միսիոներ Սմիթը գրել է. «Արդարև ոչ միայն Արարատայ, այլև աշխարհիս ուրիշ մասերուն մեջ, ուր որ շրջեցայ, չտեսա լեռ մը, որուն աւելի վայելէր, քան Արարատայ, հին և նոր աշխարհի մեջտեղ անցք ըլլալու պատիւը: Յիշեցի մարդկային ազգը նորէն կենդանացնող այն ընտանիքը, որ ժամանակաւ գտնուեցաւ այս լեռան գագաթը, և մինչ էի Երասխայ հովտին մեջ, կը թուեր ինձ, թէ այցելութիւն կընէի մարդկային ազգին երկրորդ սրբոցին»⁴:

ԲԵԹԵԼ, ԲԵԹԵԼԵԱՆ (Βαθελ, Ветильская) – Ըստ Հին Կտակարանի՝ Լուգա կոչվող քաղաքը Հակոբի կողմից վերանվանվեց Բեթել, այսինքն՝ տուն Աստծու և Բեթել քաղաքի անունից էլ՝ Բեթելի լեռներ. «ի լերինն Բեթելայ» (Ա Թագ., ԺԳ 2):

ԳԱՂԱԱԴ, ԳԱՂԱՅԱԴ (Γαλααδ, Галаад/БС-евр-Гилад) – Եբրայերեն այս լեռն անվանվում է Գադեդ, Գիդադ, Գիդեադ և նշանակում է «կարկառ վկայ, բլուր վկայութեան» (ԲՅԱ, 60): Անվան ծագումը տրրվում է Ծննդոցում (ԼԲ 47-48), Հակոբի և Լաբանի կողմից մի քարե հուշարձան դնելիս. Լաբանն այն անվանում է քաղդեերեն (ասորերեն)՝ Եկկար սահատութա (վկայության դեզ), Հակոբը՝ Գադաադ (եբրա-

³ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1, Ե., 1974, էջ 691:

⁴ Բառարան Սուրբ Գրոց (այսուհետև՝ ԲՄԳ), Կոստանդնուպոլիս, 1881, էջ 62-63:

յերեն՝ վկայության դեզ), իսկ ըստ BC -ի՝ холм свидетельства (с. 83): Ըստ Հին Կտակարանի՝ նախապես եղել է անձնանուն. «Մաքիրը ծնեց Գաղաադին...Գաղաադի որդիներ Աքիեզերը...» (Թվ., ԻԶ 29): Դատավորաց գրքում հանդիպում է մեկ ուրիշ Գաղաադ՝ Հեփթայեի հոր անունը (ԺԱ 1):

Գաղաադ լեռան առաջին գործածությունը Ծննդոցում է. «Եւ եհաս նմա ի լեռոն Գաղաադու» *opos Galaad* (ԼԱ 21): Գաղաադ լեռան հրաշալի գործածությունը Երգ երգոցում ենք տեսնում. «Ահաւադիկ կաս գեղեցիկ, մերձավոր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք բաց ի լուրթենէդ քումմէ. վարսք քո իբրեւ գերամակս այծից, որք երեւեցան ի Գաղաադէ...» (Երգ..., Դ 1): Գաղաադ սարը հանդիպում է Դատ., է 3-ում, բայց այն ուրիշ լեռ է անվանում BC -ն (էջ 83). «...Եւ դիմեցին ի լեռնէն Գաղաադու»: Գաղաադի լեռների անունով էլ կոչվում է Հորդանանում գտնվող գավառի անունը՝ Գաղաադի երկիր (Թվ., ԼԲ 29), և պետք է ասել, որ Աստվածաշնչում այս անվան բազմաթիվ գործածությունները մեծ մասամբ ակնարկում են Գաղաադի երկիրը:

ԳԱՐԻԶԻՆ (*Гаризин*, Гаризим) – Բառացի նշանակում է՝ «պատառոզք կամ բաժանարարք, կամ տապարք» (ԲՅԱ, 63): Ըստ Աստվածաշնչի՝ Գարիզին՝ (Բ Օրին., ԺԱ 29, ԻԷ 12. «Ի լերինն Գարիզին» (Հեոու, Ը 33), «Մերձ ի լեռոն Գարիզին » (Դատ., Թ 7): Սամարիայում գտնվող բարձր լեռ (դիմացը Գեբաղ լեռն է), որի վրա իրենց հատուկ կրոնական արարողություններն էին կատարում սամարացիները: Այդ լեռան՝ Սյուքար քաղաքի մոտ գտնվող Հակոբ նահապետի անունով ջրհորի մոտ տեղի է ունենում Հիսուսի գրույցը սամարացի կնոջ հետ, որին նա հայտնում է իր՝ Մեսիան լինելու մասին:

Լեռը, որն ունի 800 մետր բարձրություն, այժմ անվանվում է Ջերել-Էլ-Թոր:

ԳԵԲԱՂ (*Гевал*, Гевал) – Եբրայական այս անունը բառացի նշանակում է «եզր կամ ապար, կամ կարկառ հնութեան» (ԲՅԱ, 63): Հր. Աճառյանը անձնանունների բառարանում տալիս է Գաբաղ անունը՝ որպես ծագումն անհայտ և շատ անսովոր անուն (ՀԱԲ, հ. Բ, Ե., 1948, էջ 426): Ըստ Աստվածաշնչի՝ նախապես **անձնանուն**՝ Գեբաղ, (Ծն., Ժ 28. «Յեկտան ծնաւ...Գեբաղ», ԼԶ 23), ապա՝ **տեղանուն**՝ **Գեբաղ լեռ** [Երկ. Օրին., ԺԱ 29, ԻԷ 4, 13. «Ի լերինն Գեբաղ (*opos Gaval*), Հեոու, Ը 30...], որը գտնվում է Սամարիայում՝ Գարիզին լեռան դիմաց. այստեղ Հեոուն Աստծու համար զոհասեղան կառուցեց, նաև՝ **երկրի, գավառի անուն**՝ Փյունիկիայի հին քաղաքներից (Բիբլոս), որը ներկայումս գտնվում է Լիբանանի ծովեզրին:

ԳՈՂԳՈԹԱ (*ГолгоѠа-ν*, Голгофа/BC-евр. Гулголет) – Արամեերեն «գուգուտա» բառից, որ բառացի նշանակում է «տեղի կառափոյ կամ կառափելոյ» (ԲՅԱ, 67), «տեղի գանկի» (ԲՍԳ, 122). «Եւ երբ որ Գողգոթա

ասուած տեղն եկան, որ **գանկի տեղ ասէլ է...**» (Γολγοθα, ο εστιν Κρανιον Τοπος λεγομ ενος (Մատթ., ԻԷ 32):

Ըստ պարականոն գրականության ավանդությունների՝ Նոյի որդի Սեմին հայրը տալիս է Ադամի սրբազան նշխարներից գանգը. վերջինս այն թաղում է Գողգոթայում: Այդ մասին Գ. Տաթևացին գրում է. «Յետ ջրհեղեղին անդրանիկ որդին Նոյի՝ Սեմ եւ Արփաքսաթ որդի նորա բերեալ զնշխարն Ադամայ թաղեցին ի Գողգոթայ...»⁵: Սրանով էլ հաստատվում է այն, որ Գողգոթա անվան իմաստը ուղղակիորեն կապված է Ադամ անվան հետ: Գողգոթան այն բլուրն է կամ բարձունքը Երուսաղեմի մոտ, որտեղ, ըստ Աստվածաշնչի, խաչվել է Քրիստոսը (Հովհ., ԺԹ 17, 20, Մատթ., ԻԷ 33, Մարկ., ԺԵ 22, Եբր., ԺԳ 12): Սա պատահական համընկնում չէ. այնտեղ, որտեղ նախամարդը կնքեց իր մահկանացուն՝ հատուցելով իր մեղքի վերջնական պատիժը, խաչ բարձրացավ Քրիստոսը՝ մարդկանց ազատելով այդ մեղքի ժառանգությունից: Ադամ-Գողգոթա-Քրիստոս եռանկյունը ևս, եթե ոչ ամենակարևոր, ապա կապող օղակն է Հին և Նոր կտակարանների:

ԹԱԲՈՐ, ԹԱԲՕՐ (Θαβωρ, Фавор/BC-евр. Табор - т.е. пуп) – Ըստ Աստվածաշնչի (Հեռու, ԺԹ 34, Դատ., Դ 6, 12, 14, Ը 18, Սաղմ., ԶԸ 13)՝ Թաբօրը՝ լեռան անուն, որ նշանակում է «ընտրություն կամ մաքրություն և կամ ասորերեն՝ խորտակում կամ բեկում» (ԲՅԱ, 100):

Գալիլեայի գեղեցիկ լեռ՝ կոնաձև և անտառային, որը միայնակ լեռ է՝ 320 մետր բարձրությամբ, և որտեղից երևում է Միջերկրական ծովը: Լեռը գտնվում էր Նազարեթից ոչ հեռու: Հնում Թաբօր լեռան գլխին եղել է քաղաք, որը կար նաև Քրիստոսի ժամանակ, և որի վրա շատ երկար պահպանվել են քաղաքի պարիսպները:

Լեռն այնքան գեղեցիկ և յուրահատուկ տեսք է ունեցել, որ Երեմիայի մարգարեության մեջ դարձել է համեմատության եզր. «...ինչպես որ Թաբօրը լեռներու մեջ է...այնպես էլ անիկա պիտի գայ» (ԽԶ 18): Իսկ սաղմոսներում Հերմոն և Թաբօր լեռները հավասարաթեք են. «Թաբօրն ու Հերմոնը քո անուամբ պիտի ցնծան» (ԶԸ 13):

ԼԻԲԱՆԱՆ, ԼԻԲԱՆՈՍ, ԱՆԴԼԻԲԱՆԱՆ (Λιβανον, Λιβανον, Αντιλιβανον, Ливан/BC-евр. Ливанон) – Անունը բառացի նշանակում է «պայծառ, կամ սպիտակ, կամ կնդրուկ, կամ խունկ» (ԲՅԱ-110):

Աստվածաշնչում (Երկ. Օրին., Ա 7), Անդրլիբանան (Αντιλιβανον), Գ 25, ԺԱ 24, Հեա., Ա 4 (Լեռնալիբանան, Αντιλιβανον⁶, Դատ., Գ 3, Թ 15 (Լիբանան), Սաղմ., ՂԱ 13 (զմայրսն Լիբանանու) բազմաթիվ անգամներ հանդիպող այս լեռները կամ լեռների շղթան ձգվում է Պաղեստինի հյուսիսով: Լեռների արևմտյան գոտին ավելի բարձր է,

⁵ Գր. Տաթևացի, *Գիրք քարոզութեան, Կ. Պոլիս, 1740, էջ 41:*

⁶ Новая Женеvская учебная Библия-Э (Синодальный перевод, под общей редакцией Цорка В. А., 1998) բոլոր դեպքերում տալիս է միայն Լիբանան:

քան արևելյանը: Արևելյան ճյուղի բարձր գագաթը Հերմոնն է (2860): Մովսեսը ցանկանում էր մտնել սուրբ երկիրը, որպեսզի «ան բարի լեռը ու Լիբանանը» տեսներ (Ովս., ԺԴ 6. «Իբրեւ զԼիբանոս...»):

Լիբանանի լեռնաշխարհը Սուրբ Գրքում ներկայանում է իր ողջ հարստությամբ՝ եղնափայտով, մայրու անտառներով, հոտավետ բալզամով, գինով, և իզուր չէ, որ Երգ երգոցում այն դառնում է համեմատության եզր. «Նրա տեսքն ասես Լիբանանի ընտիր եղեւնափայտ լինի» (Ե 15), «Քո քիթը նման է Լիբանանի աշտարակին» (Է 4):

ԿԱՐՄԵՂ, ԿԱՐՄԵՂՈՍ, ԿԱՐՄԵՂՈՍ (Καρμηλος, Καρμηλω, Καρμηλον, Καρμηλιον, Кармил) – Ըստ Աստվածաշնչի (Հեւ., ԺԵ 55, ԺԹ 26, Ա Թագ., ԺԵ 12, ԻԵ 2, Գ Թագ., ԺԸ 19, Դ Թագ., Բ 25, Երգ..., Է 5)՝ **Կարմեղ** կամ **Կարմեղոս**: Լեռան անուն, որ բառացի նշանակում է՝ «գիտութիւն թլփատութեան կամ գառն թլփատացեան, կամ փափուկ, կամ ծիրանագոյն, կամ հասկ ատոք» (ԲՅԱ, 118), պտղաբեր դաշտ (ՍԳ, 269): Պաղեստինի լեռներից գեղեցկագոյնը, որին դեմ հանդիման են Թաբոր և Հերմոն լեռները: Ամբողջովին ծածկված է մայրիներով, եղնիներով և լանջերին՝ ձիթենիներով: Նշանավոր է որպէս Եղիա և Եղիսե մարգարեների այցելության վայր, այս լեռան վրա նահատակվեցին Բահադի քուրմերը (Ես., ԼԵ 2, Երգ..., Է 5, Երեմ., Ծ 19, Ամովս, Ա 2, Գ Թագ., ԺԸ):

Արևելահայերեն Աստվածաշունչը անունը տալիս է հունական տառադարձությամբ. «Գլուխդ քո վրայ նման է Կարմելոսին» (Երգ..., Է 5):

Թեև ըստ Աստվածաշնչի՝ հայտնի է նաև քաղաք համանուն լեռան վրա (Հեսու, ԺԵ 55), սակայն հայ բանաստեղծները հիշատակում են լեռը:

ՀԵՐՄՈՆ, ԱՀԵՐՄՈՆ, ՀԵՐՄՈՎՆ (Αερμων, Ερμων, Ермон/БС-евр. Хермон-святой или недоступный) – Ըստ Աստվածաշնչի՝ ն՝ Ահերմոն (Երկ. Օրին., Գ 8, 9, Դ 48, Հեւ., ԺԱ 3, 17, ԺԲ 1, 5, ԺԳ 5, 11, ԺԵ 49, Ա Մնաց., Ե 23), և՛ Հերմոն (Գ Մակ., Ե 1, Սաղմ., ԻԱ 7, ՁԸ 13, ՃԼԲ 3, Երգ..., Դ 8): Բառացի նշանակում է «նզովք կամ կործանում», նաև հունարեն հերմոն բառից է, որ ստուգաբանվում է «նեցուկ անկողնուց կամ հաստատուն» (ԲՅԱ, 126): Փյունիկեցիները լեռն անվանել են Սանիոր, ամորիացիները՝ **Սանիր** (ԲՅԱ, 126): Երբեմն նույնացվում է Սիոն-ի հետ, մինչդեռ պետք է տարբերել Ահերմոնը նկատի ունեցող Սիոն-ը բուն Սիոն-ից: Միջնադարյան հայ բանաստեղծները հաճախ առանձնացնում են Ահերմոնն ու Սանիրը, թեև դրանք նույն լեռն են անվանում:

Հերմոնը բարձր և շքեղ լեռ է Պաղեստինի հյուսիս-արևելքում, որի վրա, ըստ երևույթին, աշակերտները տեսան Հիսուսին՝ պայծառակերպությամբ փառավորված:

ՍԱՆԻՐ, ՍԱՆԻՐԱ (Σανιρ, Санир) – Ըստ Աստվածաշնչի (Երկ. Օրին., Գ 9, Ա Մնաց., Ե 23, Եզեկ., ԻԷ 5, Երգ..., Դ 8)՝ Սանիրով, Սա-

նիր, որի նշանակությունն է ճրագի փոփոխություն (ԲՅԱ, 199): Սա նույն Հերմոն լեռն է. «Եւ առուք ի ժամանակին յայնմիկ զերկիրն ի ձեռաց երկուց թագաւորացն Ամովրիացոց, որ էին յայնկոյս Յորդանանու, յԱռնովնայ մինչեւ ցՀերմոն: Եւ Փիւնիկեցիք անուանեցին զՀերմոնն Սանիովր, եւ Ամովրիացին անուանեաց զնա Սանիր» (Երկ. Օրին., Գ 8, 9): Սակայն մեր բանաստեղծները առանձնացնում են Սանիրն ու Հերմոնը՝ իբրև առանձին լեռներ: Սա ևս գալիս է Աստվածաշնչից. «Եկ ի Լիբանանէ, հարսն, եկ այսր ի Լիբանանէ, եկեսցես եւ անցցես ի գլխոյ հաւատոց ի կատարէ Սանիրայ եւ Հերմոնի...» (Երգ..., Դ 8):

Սուրբ Գրքում Սանիրը ընթերցողին փաստորեն հանդիպում է այլևայլ անուններով՝ Սանիոր, Ահերմոն, Հերմոն, Բաադիերմոն:

ՀՈՎԸ (ՁԹ, Օր) - Ըստ Աստվածաշնչի (Թվ., Ի 22, 23, 25, 27, ԻԱ 4, ԻԷ 13, Բ Օրին., ԼԲ 30)՝ կոնաձև լեռ (1330), Մեռյալ ծովի շրջանի անապատում՝ Եդովմի սահմանի մոտ՝ երեք ապառաժոտ կատարով: Այս լեռան վրա է մահացել Ահարոնը: «Եւ արար Մովսէս որպէս եւ հրամայեաց նմա Տէր, եւ եհան զնա **ի Հովր** լեռոն առաջի ամենայն ժողովրդեանն: Եւ մերկացոյց յԱհարոնէ զհանդերձս նորա, եւ զգեցոյց զնոսա Եդիագարու որդւոյ նորա, եւ մեռաւ Ահարոն ի գլուխ լերինն, եւ իջին Մովսէս եւ Եդիագար ի լեռնէ անտի » (Թվ., Ի 27-29):

Եվս մի կարևոր դրվագ. Հովր լեռան վրա է գտնվում **Մեղմոնա** կոչվող վայրը (բառացի նշանակում է պատկեր), որտեղ Մովսէսը կանգնեցրեց պղնձե օձը, որը խորհրդանիշ էր Քրիստոսի խաչի:

ՉԻԹԵՆՅԱՑ ԼԵՌ (Օρος των Ελαιων—os, Елеонская гора, Масличная гора) - Նոր Կտակարանում (Մատթ., ԻԴ 3, Մարկ., ԺԳ 3, Ղուկ., ԻԱ 37, Հովհ., Ը 1,37) նշվում է, որ այս լեռը եղել է Հիսուսի սիրած վայրերից, ուր նա հաճախ այցելել է իր աշակերտների հետ: Լեռն այսպես է կոչվել առատ աճած ձիթենիների պատճառով, որոնցով այսօր էլ ծածկված է: Գտնվում է Երուսաղեմի արևելքում և քաղաքից բաժանվում է Կեդրոնի հեղեղատով (Բ Թագ., ԺԵ 30/λαιων, Елеонская гора) : Այս բարձունքից բացվում է Ավետյաց երկրի սքանչելի համայնապատկերը, երևում են ողջ Երուսաղեմը, Հորդանան գետը և Մեռյալ ծովը: Լեռն ունի 818 մ բարձրություն, երեք գագաթ. հարավայինը կոչվում է **Հանցանքների լեռ**⁷, քանի որ այն պղծեց Սողոմոնը կռապաշտությամբ (Գ Թագ., ԺԱ 5-7, Դ Թագ., ԻԳ 13 /Масличная гора): Հյուսիսային գագաթը անվանվում է **Գալիլեայի տղամարդիկ** (Вири – Галилей/ Գործ., Ա 10), որովհետև այստեղ Հիսուսի աշակերտներին երևացել են երկու սպիտակազգեստ տղամարդիկ: **Միջին** կոչվող գագաթից երևում են և՛ Երուսաղեմը, և՛ ողջ երկիրը: Ավանդությունն ասում է, որ Քրիստոսը համբարձվեց այս լե

⁷ Ուսերեն տրվում է гора Сობлазна (BC, 126):

ռան կատարից⁸, և Համբարձման եկեղեցին էլ կառուցված է այստեղ: Մարգարեններն ասում են (Ձաք., ԺԴ 4), որ Քրիստոսի երկրորդ գալստյամբ դատաստանը այստեղ պետք է տեղի ունենա:

Բացի հայ բանաստեղծության մեջ կիրառված Ձիթենյաց լեռ արտահայտությունից, Միամանթոն է գործածում **Ձիթենու ուստ** (Ցեղին սիրտը)՝ շեշտելով նրա աստվածաբույս լինելը:

ՆԱԲԱՎ (Ναβαν, Ново, Нево) – Անվան բառացի նշանակությունն է «խօսք կամ մարգարեություն, կամ պողաբեր, կամ բուսեալ» (ԲՅԱ, 172):

Նաբավը Մովսեսի⁹ երկրի լեռներից է, որի կատարից Մովսեսը տեսավ Ավետյաց երկիրը և այդտեղ էլ մեռավ: Այժմ լեռն անվանվում է **Նեբո** (Թվ., ԻԷ 12, ԼԲ 3, 42, ԼԳ 47, Բ Օրին., ԼԲ 49, ԼԴ): Աբարիմը և Նաբավը տարբեր լեռներ են, թեև դրանք հաճախ շփոթում են:

ՄԻՆԱ, ՄԻՆԵԱ, ՄԻՆԷ (Σινα, Синай) – Անվան բառացի նշանակությունն է մորենի կամ վահան և կամ ասորերեն՝ թշնամություն (ԲՅԱ, 209): Հավանական կարելի է համարել մորենի նշանակությունը, քանի որ, ինչպես գիտենք, Աստված հայտնվեց Մովսեսին մորենու միջից, որը բոցով էր պատված, բայց չէր այրվում, որի պատճառով էլ մորենին ստացավ առանձնահատուկ իմաստ, ինչպես **Մաբեկի ծառը**, **Մամբրեի կաղնին**: Ահա թե ինչու մեզ թվում է, որ մորենի նշանակությունն է ամենահավանականը, թեև այս լեռն անվանվել է նաև **Քորեթ**, որ նշանակում է անջրդի: ԲՇ -ն այլ տեսակետներ է ներկայացնում. «Название Синай объясняется одними как многовершинная гора, другими, как гора, посвященная богу луны, т.к. богу луны под названием Син поклонялись не только вавилоняне...а также и арабы, и на горе Хорив-Синай было капище бога луны... Указывается также, что гора Синай еще до издания Закона называлась горою Божией (Исх. 3:1, 4:27, 18:5), а после этого стала называться горою Господней (Чис. 10:33 (էջ 411):

Ըստ Աստվածաշնչի՝ **Մինա** կամ **Մինե** (Ել., ԺԹ 2, 3, 11, Թվ., Ժ 12, ԻԳ 15, Սաղմ., ԿԷ 9. «Երկինք ցոլեցին յերեսաց Աստուծոյն ի Մինե», 18. «Տէր ի նոսա ի Մինե». լեռ կամ լեռների շղթա, որ գտնվում է Կարմիր ծովի Մինա թերակղզում, ուր իջավ Աստված և տվեց իր տասը պատգամները Մովսեսին, և այդ օրից լեռը դարձավ հռչակավոր ու կոչվեց **Սուրբ լեռ**. «Եւ Տէրն ասեց Մովսէսին. Ահա ես քեզ մօտ կգամ թանձր ամպի մէջ, որ ժողովուրդը լսէ՝ ես քեզ հետ խօսելիս, եւ քեզ էլ հաւատայ...»

⁸ Մակայն Ղուկասի Ավետարանը հակասում է սրան՝ ասելով, որ Քրիստոսը համբարձվել է Բեթանիայից. «Ապա նրանց տարավ հանեց մինչեւ Բեթանիա եւ, բարձրացնելով ձեռքերը, օրհնեց նրանց...» (ԲԴ 50):

⁹ Ղովտի որդի Մովսեսի անունով կոչվում են երկիրը, դաշտը և լեռը (Ծն., ԺԹ 37, Թվ., ԻԱ 11, 15, 20, 26, 28, 29, 30):

(Ել., ԺԹ 9): «Սինայ սարը բոլորովին ծխում էր, որովհետեւ Տէրը նորա վերայ իջաւ կրակով, եւ նորա ծուխը հնոցի ծուխի պէս էր դուրս գալիս, եւ բոլոր սարը սաստիկ դողում էր » (Ել., ԺԹ 19):

Հետաքրքիրն այն է, որ Սինա և Քորեբ լեռները շատերը նույնացնում են, ոմանք էլ կարծում են, որ դրանք միմյանց մոտ են գտնվում, ուստի երբեմն շփոթմամբ մեկը գործածվում է մյուսի փոխարեն:

Հայ բանաստեղծները ավելի շատ նախընտրում են **Սինա** անունը, թեև Գ. Նարեկացու և Հ. Երզնկացու երկրում հանդիպում են ն' Սինա, և՛ Քորեբ անունները: Հ. Երզնկացին գրում է. «Կամ ցողն յԱհերմոն լերին եւ ի Սինայ քաղցրիկ նա ցողել»: «Լեառն Սեպուհոյ հանգոյն Սինայի ...»¹⁰:

ՍԻՈՆ, ՍԻՈՎՆ, ՍԻՕՆ, ՍԻՕՎՆ (Σιων, Сион) – Անվան նշանակությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «դիտանոց կամ կարկառ, կամ ըստ ոմանց ցամաքություն կամ չորություն» (ԲՅԱ, 210), նաև արևային՝ ըստ ըհ-ի (415): Ըստ Աստվածաշնչի՝ **Սիոն** կամ **Սիովն** (Բ Թագ., Ե 7), (Գ 15, Ը 1, Դ Թագ., ԺԹ 21, 31, Ա և Բ Մնաց., Սաղմ., 39 Բ 6. «Ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա...», Սաղմ., Թ 12, 15, ԽԷ 12, ՀԲ 28. «Ուրախ եղիցի լեառն Սիոն»:

Լեռ կամ բլուր Երուսաղեմում (777 մ), որտեղ, ըստ Աստվածաշնչի, գտնվում էին Աստծու տաճարը և Դավիթ թագավորի ամրակուռ ապարանքը: Սկզբնապես սա եղել է Երուսաղեմի հնագույն մասը, հետագայում դարձավ նրա երկրորդ անվանումը¹¹: Ըստ Սուրբ Գրքի՝ Սիոն լեռը գտնվում էր մի քաղաքի մեջ, որը Դավիթ թագավորը խլեց երուսացիներից և այն կոչեց Դավթի քաղաք: Լեռան անունից էլ երբեմն քաղաքը ևս կոչվում է **Սիոն** (Գ Թագ., Ը 1, Ես., Ա 21):

ՍՈՓԵՐ, ՍՈՎՓԵՐԱ (Σωφρα, Сѡφара, Офир) – Անվան նշանակությունն է «դպիր կամ մատեան, կամ պատմիչ, կամ թուօղ» (ԲՅԱ, 215): Ինչպես տեսնում ենք, այս անվան դեպքում տարրնթերցումներ է տալիս ռուսերեն տեքստը՝ Сѡфара, Офир:

Ըստ Աստվածաշնչի (Մն., Ժ 30, Ա Մնաց., ԻԹ 4, Գ Թագ., Թ 28) ԿԻՌԴ՝ **Սովփեր, Սովփերա**. «Եւ եղև բնակություն նոցա ի մասեաց մինչև գալ ի Սովփերա (Сѡфара) լեառնն արեւելայց» (Մն. Ժ 30), «Երիս հազարս տաղանդս ոսկի ի Սովփերայ (եբր.՝ Ոփիրայ)... օծանել նորոք գորմս»

¹⁰ **Հովհ. Երզնկացի**, *Բանք չափավ, աշխատությամբ Ա. Ե. Սրապյանի, Ե., 1986, էջ 27, 131, 173: Սեպուհ լեռը գտնվում է Մեծ Հայքի Եկեղյաց գավառում և նշանավոր դարձավ այն բանի շնորհիվ, որ այս լեռան վրա իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց Գրիգոր Լուսավորիչը:*

¹¹ Քրիստոնեական աշխարհում Սիոն անունը հաճախ գործածվում է Երուսաղեմ անվան փոխարեն, նրան հոմանիշ: Հուդայական կրոնում Սիոնը այլաբանորեն նշանակում է Աստծու հավատարիմ մարդ: Սիոնի դուստր կամ դուստրեր արտահայտությունը Երուսաղեմի և նրա ժողովրդի պոետական անվանումն է:

տաճարին», որն առատ է եղել ոսկով և ադամանդով, ուստի հաճախ ազնիվ ոսկի և ակն պատվական ասելու փոխարեն գործածվել է «ոսկի սօփերայ, ակունք սօփերայ» արտահայտությունը (Ա Մնաց., ԻԹ 4, Հոբ, ԻԸ 16, Ես., ԻԱ 12): ԲՄԳ-ն սա նույնացնում է **Սապպեր** լեռան հետ (Էջ 516): Թե որտեղ են գտնվում այս լեռը և համանուն երկիրը, անհայտ է, բայց ոմանց կարծիքով, սա Հնդկաստանն է: Ավելի հավանական է համարվում Արարիայի հարավային ափերը, իսկ վերջին ժամանակներում արդեն նույնացվում է Պերուի հետ (ԲՇ, 295):

ОНОМАСТИКА БИБЛИИ: НАЗВАНИЯ ГОР

МЕЙТИХАНИЯН П. Г.

Резюме

Среди библейских собственных имен особый интерес представляют названия гор. Они содержат в себе частицу истории не только еврейского, но и других народов, и исследование горных названий выявляет множество интересных фактов.

В ряду названий гор еврейского происхождения в Библии в числе первых упоминается Арарат, имеющий для армян особый смысл и значение.

Названия гор исследуются на основе сравнительного материала греческой Септуагинты.